

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի Թ. 726-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ  
ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

1. Հաշվետվությունը ներկայացնող գերատեսչության/կազմակերպության անվանումը

..... ՀՀ առողջապահության նախարարություն .....

2. Տեղեկություններ տրամադրող պատասխանատուն

ՀՀ ԱՆ աշխատակազմի ԲՕԿՎ հիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ  
**Նարինե Մարգարյան**

| ԳԱԾ-ի<br>համապատաս<br>խան կետը | Միջոցառումները   | Տեղեկատվություն իրականացված միջոցառման/ների<br>վերաբերյալ (այդ թվում՝ ըստ գնահատման ցուցիչների)  | Այլ նշումներ |
|--------------------------------|--|--|--------------|
| 1.1.1.                         | Իրականացնել մարդկանց թրաֆիքինգի և<br>շահագործման երևույթի հետ կապված<br>Հայաստանի Հանրապետությունում գործող և<br>միջազգային օրենսդրական դաշտի<br>շարունակական վերլուծություն | Ուսումնասիրվել են «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ<br>պայքարի մասին» Եվրոպական կոնվենցիան, Մարդկանց<br>թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և<br>աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական օրենսգիրքը և մի<br>շարք այլ փաստաթղթեր: Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ<br>կառավարության 04.03.2004 թվականի թիվ 318-Ն որոշմամբ<br>հաստատված հավելված 1-ի 23-րդ կետի համաձայն՝ Մարդկանց<br>շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք պետության<br>կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով<br>բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն:<br><br>Ուսումնասիրությունները կրում են շարունակական բնույթ: |              |

|       |  |  |  |
|-------|--|--|--|
| 2.1.3 | Առողջապահական և ուսումնական հաստատություններում շարունակել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վտանգի մասին առկա տեղեկատվական նյութերի տրամադրումը (տարածումը)   | Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից տրամադրված «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում հրատարակված հետևյալ աշխատությունների՝ «ՄՄԿ տվյալների պաշտպանության վերաբերյալ ձեռնարկը», «ՄՄԿ ձեռնարկը թրաֆիքինգի զոհերին ուղղակի աջակցություն մատուցելու մասին» և «Թրաֆիքինգից տուժած անձանց խնամքը» խորագրով դասընթացավարի ուղեցույցների յուրաքանչյուրից 200-ական օրինակները ՀՀ առողջապահության նախարարության կողմից բաշխվել է ՀՀ մարզերում և քաղաք Երևանում տեղակայված ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների միջև՝ վերոնշյալ տեղեկատվական նյութերի տարածման նպատակով: |  |
| 2.1.6 | Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ հանրային իրազեկման ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդում ներկայացված նախարարությունների և գերատեսչությունների պաշտոնական կայքերում տեղադրել <a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքի հղումը | ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքի <a href="http://www.moh.am/">www.moh.am/</a> ԾՐԱԳՐԵՐ / ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ դարանում տեղադրվել է կառավարության որոշումը:<br>ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքի ՀՂՈՒՄՆԵՐ դարանում տեղադրվել է <a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքի հղումը:  |  |
| 2.2.3 | Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման՝ հատկապես աշխատանքային և երեխաների թրաֆիքինգի և շահագործման, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ դասընթացներ կազմակերպել ներքոհիշյալ մարմինների և   | Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետքուհական և շարունակական կրթության ֆակուլտետում կազմակերպված մեկամսյան դասընթացներում ներառվել են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց բժշկական օգնության հետ կապված խնդիրները և տեղեկատվությունը՝ պետական պատվերի շրջանակներում   |  |

|       |  |  |  |
|-------|--|--|--|
|       | <p>կազմակերպությունների համապատասխան աշխատողների համար՝</p> <p>12) ՀՀ առողջապահական համակարգի, այդ թվում՝ առողջապահական պետական տեսչության</p>   | <p>վերջինների բուժօգնության կազմակերպման մասին, համաձայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման հավելված 1-ով սահմանված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկի:</p> <p>Դասընթացներ անցել են <b>50 բուժաշխատող՝</b> 25 բժիշկ, 25 բուժքույր:</p>  |  |
| 2.3.3 | <p>Կազմակերպել մինչև 18 տարեկան աշխատող երեխաների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրազեկման և աշխատող երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման կանխարգելման վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ</p>  | <p>2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ Արագածոտնի, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերի ավագ դպրոցների աշակերտների շրջանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վտանգի մասին առկա տեղեկատվություն տրամադրելու նպատակով «Թրաֆիքինգ և հարկադիր աշխատանք», «Երեխաների աշխատանք և երեխայի աշխատանքային շահագործում», «Աշխատանքային հարաբերություններ» թեմաներով անց են կացվել իրազեկման դասընթացներ:</p>   |  |
| 2.5.1 | <p>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վտանգի, զոհերի հանդեպ անհանդուրժողականության դրսևորումների դեմ պայքարի վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացման նպատակով ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ շարունակել կազմակերպել հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, քննարկումներ, հանդիպումներ, սոցիալական գովազդների ցուցադրություններ և այլն</p> | <p>Աես անդամ հանդիսացող պետական կառավարման մարմիններ</p> <p>ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց մատուցվող առողջապահական անվճար ծառայությունների մասին» տեղեկատվական թերթիկը տեղադրված է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք-էջի Տեղեկատու դարանում:</p> <p>«Թեժ գիծ» ծառայության միջոցով շուրջօրյա տրամադրվում է տեղեկատվություն ՀՀ կառավարության 04.03.2004թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման հավելված 1-ով սահմանված</p> |  |

|       |   |  |  |
|-------|---|--|--|
|       |   | <p>բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված ՀՀ բոլոր քաղաքացիների (ներառյալ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց) պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության արտոնություններից օգտվելու վերաբերյալ:</p> |  |
| 3.2.2 | <p>Ապահովել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց մատուցվող անհրաժեշտ ծառայությունների նվազագույն չափորոշիչների ներդրումը:</p> | <p>ՀՀ առողջապահության նախարարությունը կազմակերպել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված 1 անձի բժշկական օգնություն և սպասարկում պետական պատվերի շրջանակներում: Կատարվել է որովայնի խոռոչի համակարգչային շերտագրում և էխոսրտագրություն հետազոտություններ:</p>   |  |